

# Ֆրունզե Պետրոսյան 80

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է  
**2003/6**  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ  
ՀՊՆԱԿՈՒՄ ԵՎ ՀՊՆԱՍՏՈՒՄ «ՍՅՈՒՆԻԱՍ ԱՇԽԱՏՎՈՒՄ»  
ՍՏՊԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՆԱԿԱՆ-ՊՐԵՍՏԱՆ ԵՎ ԿՈՄՊՅՈՒՏԵՐՆԵՐ  
ՀԱՍՏԵՒ Բ. ԿԱՊՐԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 2032  
ՀԵՌԱՆՆՈՒՄ՝ (0285) 5 25 63 (091) 45 90 47 (077) 06 28 02  
Էլ. հասցե՝ www.syunicyerkir.am  
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru


Ողջ կյանքը՝  
ինքնամոռաց  
աշխատանքի  
լավագույն  
օրինակ

### ԴԻՍԱԼԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ

Հայաստանի հանքարդյունաբերության հսկան՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ղեկավարած տնօրեններից առանձնանուն է Ֆրունզե Պետրոսյանի անունը: Երկու անգամ միեւնույն գետը չես մտնի. հայտնի ձեռակերպումն այս դեպքում անդամալիորեն կորցնում է իմաստը: Քանզի նա միակն է, ով երկու անգամ եղել է ձեռնարկության տնօրեն: Հայաստանի հանքարդյունաբերության երախտավորը 18 տարի ղեկավարել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը (1977-ից՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ), եւս տասը տարի՝ Հայաստանի գունավոր մետալուրգիայի վարչությունը: Այս պաշտոնում իր ներդրումն է ունեցել գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների վերելքի, սոցիալ-տնտեսական խնդիրների իրականացման գործում:

Այդ ամենի հիմքերը դրվեցին անցյալ դարի կեսերին: Նախ ընդունվեց պոլիտեխնիկականի ճարտարապետության բաժինը, բայց նախախնամությունը նրա համար այլ ճակատագիր էր նախանշել: Լեռնագործի մասնագիտությունն իր իսկ բնօրրանում նոր եւ հետաքրքիր աշխատանք ունեցող հեռանկար էր բացում: Մանավանդ որ Քաջարանում դեռեւս Մեծ հայրենականից առաջ սկսել էին լեռնային աշխատանքների նախապատրաստումը, որին պետք էր հաջորդէր հանքաքարը հարստացնող ֆաբրիկայի կառուցումը: Եվ ընտրեց հանքագործի մասնագիտությունը: «Ազնիվ աշխատանքով ապրեցեք կյանքը», – Երեւանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի 1954թ. շրջանավարտ Ֆրունզե Պետրոսյանը միշտ հիշում էր ֆակուլտետի ղեկանի խոսքը: Իսկ իր ծննդավայրը, ավելի ստույգ՝ Քաջարանի կոմբինատը հմուտ բանվորների, տեխնիկների, ճարտարագետների կարիք էր զգում: Այն ժամանակ մատների վրա կարելի էր համրել նման լեռնային ինժեներների: Բարձրագույն Գանձասար, անցավ լեռնային ճարտարագետի, արտադրության ղեկավարի աստիճաններով, նախ՝ որպես ստորգետնյա հանքում հերթափոխի պետ, այնուհետեւ նշանակեցին հանքի գլխավոր ինժեների տեղակալ, հորատման-պայթեցման աշխատանքների ղեկավար, գլխավոր ինժեներ, հանքի պետ: Հինգ տարում՝ հինգ՝ մեկը մյուսից պատասխանատու աշխատանք: Իսկ երբ Գանձասարի բաց եւ ստորգետնյա հանքերը միավորվեցին, վեց տարի գլխավորեց լեռնային արտադրամասը, երեք տարի՝ կոմբինատի արտադրատեխնիկական բաժինը:

Այդ տարիներին դրսևորվեցին ոչ միայն արտադրության կազմակերպչի հատկանիշները, այլև իրեն դրսևորեց որպես զգալուն ու սրտացավ լեռնագործ: Արդեն խունացած շրջանային «Պղնձի համար» թերթի 1971թ., մարտի 18-ի համարում նրա մասին տպագրված ակնարկում կարդում ենք. «Մեր նոր ղեկավարը՝ Ֆրունզե Պետրոսյանը, հոգի տղա է, ասես հանքերի հաշարնակությունը՝ էջ 10



**Ջանգեզուրի  
պղնձամոլիբդենային  
կոմբինատի տնօրենը**

# Ժամանակակիցների հուշեր



## ՍՈՒՐԵՆ ԽԱԶՍԻՐՅԱՆ

Այունիքի մարզպետ

Ֆրունզե Պետրոսյանի հետ շփվելու, առնչվելու մի քանի առիթ են ունեցել: Մինչ այդ նրան գիտեի լսելով, հեռվից: Եվ մեր հանդիպումների, շփումների արդյունքում վերահաստատվեց այն պատկերացումը, որ ունեի: Լեռնահանքային ոլորտի լուրջ մասնագետ էր ու հմուտ կազմակերպիչ, ճանաչված լեռնագործ էր ոչ միայն Հայաստանում, այլև Խորհրդային Միությունում: Պատահական չէ, որ նրան էր վստահվել Հայաստանի գունավոր մետալուրգիան կառավարող գերատեսչության ղեկավարումը: Պատահական չէ, որ երկու անգամ նրան վստահվեց Ջանգեզուրի ՄՍԿ-ի ղեկավարումը, որն ամենախաղաղ երեսույթ էր: Անգերազանցելի էր նրա ավանդը Քաջարանի կոմբինատի վերջնական կայացման, հանքարդյունաբերական այդ հսկան արդիական տեխնիկայով վերազինելու, արտադրության ժամանակակից մեթոդների ներդրման, աշխատանքային կայուն կոլեկտիվի ձեռավորման գործում: Նա ակտիվ մասնակցություն ունեցավ Քաջարան քաղաքի վերաշինմանը, Կապանի շրջանի սոցիալ-տնտեսական և հոգեւոր-մշակութային զարգացմանը: Եվ եթե այդ ամենին ավելացնենք նրա մարդկային, քաղաքացիական վեհ հատկանիշները, ապա կամբողջաբան Ֆրունզե Պետրոսյանի կերպարը, ինչը, անտարակույս, ընդօրինակման արժանի է աճող սերունդի, տնտեսության մերօրյա կազմակերպիչների համար:



## ՄԱՔՍԻՄ ՀԱՎՈՐՅԱՆ «Ջանգեզուրի» ՄՍԿ ՓԲԸ ԿՈՐՄԻՏԵ

Մենք հրաժեշտ տվեցինք մի մարդու, ով հանրապետության հանքարդյունաբերության ոլորտում և, մասնավորապես, Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայացման և զարգացման գործում իր անգերազանահատելի ավանդն էր ունեցել: Քիչ է ասել, թե Ֆրունզե Հնայակովիչին այս ոլորտում ճանաչում ու հարգում էին՝ նա մարդկային իր որակներով, մասնագիտական հմտություններով ու ղեկավարի բնածին ունակություններով ոչ միայն հասավ հանրապետության մակարդակով բնագավառի ամենաբարձր պաշտոնների, այլև իր վարակիչ օրինակով դաստիարակեց ու իր հե-

տելից տարավ հանքարդյունաբերության նվիրյալների մի ողջ համաստեղություն: Նա կարողացավ դրանով հանրապետության հանքարդյունաբերությունը հասցնել իր աստելային ժամին: Այդպես եզակիներին է հաջողվում, եւ նա հենց այդպիսին էր: Գաղտնիքն այն էր, որ Ֆ. Պետրոսյանը ոչ թե պարզապես գիտեր ղեկավարել, այլ իր այդ «կենցաղային» մեջ ավելի շատ դաստիարակում էր. ահա թե ինչի մեջ էր նրա գործելանոճի ողջ «հմայքը»: Նրա պահանջկոտությունը, խստությունը երբեք պարտադրանքի չվերածվեցին՝ կամուկին ու, երբեմն՝ անգամ հաճույքով ենթարկվելով դրանց, մենք ձգտում էինք լինել հենց այդպիսին, գիտակցելով, որ դրա համար նախ անհրաժեշտ է նրա նման տիրապետել մասնագիտության ողջ համակարգին ու ձեռք բերել աշխատանքային հմտություններ: Այս առումով Ֆրունզե Պետրոսյանը հարյուրավոր քաջարանցիների համար նպատակակետ էր դարձել, բոլորն ուզում էին գնալ նրա ճանապարհով, հասնել նրա փառքին...

Մենք նրան կորցրինք, բայց... միայն ֆիզիկապես: Քանի որ այն, ինչ նա արեց իր ողջ կյանքի ընթացքում, ինչ թողեց, այլևս երբեք չի կորչելու՝ դա մեր մեջ է, այն ավանդույթների, մարդկային ու գործընկերային այն հարաբերությունների մեջ, որոնք հաստատապես ամրագրվել ու դեռևս շատ երկար կպահպանվեն նրա երբեւէ ղեկավարած կոլեկտիվներում և, մասնավորապես, Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Հատկապես 2009-ի կոլեկտիվի անցած տարեգրության մեջ նա դարձավ այն ղեկավարներից, ովքեր հիրավի արժանի են, որ ձեռնարկությունում իրենց հիշատակը հավերժացվի հուշարձանով, թանգարանում իրենց «անկյունն» ունենան:

«Հանքագործ և մեթալուրգ», № 1 (8), 2010թ. ■



## ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐՅԱՆ Քաջարանի քաղաքապետ

Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենների համաստեղության մեջ Ֆրունզե Պետրոսյանն առանձնահատուկ հեղինակություն ունեցող անձնավորություն է եղել, զտարյուն մտավորական: Կոմբինատի ղեկը վստահվում էր ընտրյալներին, իսկ նա, իրոք, անհատականություն էր: Հետաքրքրական է, որ նրա գործունեությունը, որպես արտադրության ղեկավար, առավելապես գիտական ուղղվածություն էր ունեցել, շատ երիտասարդ տարիքում թեկնածուական թեզ էր պաշտպանել Մոսկվայում և գիտատեխնիկական նվաճումները ձգտում էր մերդել արտադրության մեջ: Կոմբինատի պարբերաբար տեխնիկական վերազինումը եւ արտադրական կարողությունների ընդլայնումը կապված են նրա անվան հետ: Ձեռնարկության տարեգրության մեջ կմնա ուղի հարթող ղեկավար, նախագահ: Որքան էլ զարմանալի լինի, նրան

մեղադրում էին պետականամետության մեջ, բայց իրեն «մեղադրողներին» միշտ լռեցնում էր ասելով. «Պետությանը տալով, մենք ուժեղանում ենք»: Եվ դրանում մեծ ճշմարտություն կար, քանզի Քաջարանի կոմբինատը, պետական պլանները կատարելով և գերակատարելով, հնարավորություն էր ստանում քաղաքում սոցիալական հարցեր լուծել: Ի դեպ, Ֆրունզե Հնայակիչը Քաջարանի հոգսերով ապրող ղեկավար էր, նրա պաշտոնավարման օրոք բարելավվեց քաղաքի բնակարանային ֆոնդը, շարք մտան սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտներ: 1997-ին Քաջարանի քաղաքապետարանի որոշմամբ արժանացել էր Քաջարանի պատվավոր քաղաքացու կոչման: Քաջարան քաղաքի 50-ամյա հոբելյանին նվիրված նրա բարեմաղբերի խոսքը՝ 2009-ի սեպտեմբերի 7-ին, մի պատեհ առիթ էր իր համաքաղաքացիների վաստակը մեծարելու:

Նրա մարդկային հատկանիշներից կառնածնացնելի սկզբունքայնությունը, նաեւ շատ բժախնդիր էր, մասնավորապես աշխատանքային կարգապահության եւ արտադրական պլանները կատարելու խնդրում: Շատերն ասում էին, թե Ֆրունզե Հնայակիչը չի ժպտում, բայց այդ ժպիտ կարելի էր տեսնել առօրյա փոխհարաբերություններում, աշխատանքից դուրս:

Ինչեւէ, շարունակվելու է սերունդների երթը, տնօրեններ են փոխվելու, բայց ձեռնարկության պատմության մեջ ոսկե տառերով է գրվելու Ֆրունզե Պետրոսյանի անունը: ■



## ԲՈՐԻՎ ՄՎԻՐՅԱՆ Հայաստանի հանքագործների և մեթալուրգների միության ԿՈՐՄԻՏԵ

Ֆրունզե Պետրոսյանին ճանաչում են մանկուց, Քաջարանց գյուղում մոտ հարեաններ էին: Ինձ եւ շատ-շատերի համար հենց նա է օրինակ ծառայել, որպեսզի ընտրենք հանքագործի դժվարին, բայց պատվաբեր մասնագիտությունը: Ֆրունզե Պետրոսյանը Հայաստանում ավարտած առաջին լեռնային ինժեներներից էր, ով երբեք չխուսափեց ընդհակառակը՝ նվիրումով ու սիրով ընդգրկվեց ամենաբարդ, ամենավտանգավոր աշխատանքներում: Մենք միասին աշխատել ենք ավելի քան երեսուց տարի՝ տարբեր պաշտոններում: Շատ հաճախ հարցեր ենք քննարկելիս վիճել ենք, սակայն ի վերջո ընտրել ենք ամենառաջիկա, ամենաճիշտ լուծումը: Նա շատ լավ մասնագետ էր, համեստ, ազնիվ, արդար, հետեւողական, պահանջկոտ: Խորապես տիրապետում էր ոչ միայն իր մասնագիտությանը, այլև հանքաբարդ հարստացման տեխնոլոգիային, կոմբինատում աշխատող մեխանիզմներին և սարքավորումներին: Քաջ գիտեր նաև տնտեսության եկոնոմիկան, կարողանում էր

կատարել անպիղք մշակել տնտեսության ցուցանիշների բարելավման համար միջոցառումներ: Այդ էր պատճառը, որ նրա հետ հեշտ էր աշխատել առանց բարդությունների: Նա թույլ էր տալիս, որ արտադրամասերի պետերն ինքնուրույն որոշումներ կայացնեն, համոզված էր, որ այդ դեպքում նրանք կաշխատեն ավելի նվիրումով, ավելի մեծ պատասխանատվությամբ: Չէր սիրում բժնողներին, ինքը չէր բժնում: Երեւի դա էր պատճառը, որ առանձնակի չէր ցանկանում չվիճել վերադասի հետ:

Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտում և, մասնավորապես, Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայացման և զարգացման գործում իր անգնահատելի ավանդը էր ունեցել Քաջարանի պատվավոր քաղաքացի, տեխնիկական գիտությունների թեկնածու, հանրապետության վաստակավոր ինժեներ Ֆրունզե Պետրոսյանը:

Այս ոլորտում նրան ճանաչում ու հարգում էին մարդկային իր որակների, մասնագիտական հմտությունների ու ղեկավարի բնատուր հատկությունների համար, որոնց շնորհիվ նա ոչ միայն հասավ հանրապետության մակարդակով բնագավառի ամենաբարձր պաշտոնների, այլև վարակիչ օրինակով դաստիարակեց ու իր հետեւից տարավ հանքարդյունաբերության նվիրյալների մի ողջ համաստեղություն:

Այս որակների շնորհիվ նա կարողացավ հանրապետության հանքարդյունաբերությունը հասցնել իր ժամանակի համար ամենագարգազած մակարդակի: Այդպես եզակիներին է հաջողվում եւ նա հենց այդպիսին էր: Ֆ. Պետրոսյանն օժտված էր ղեկավարելու յուրաքանչյուր ծիրով, որով ավելի շատ դաստիարակում էր, քան պարտադրում: Կամուկին ու, երբեմն՝ անգամ հաճույքով ենթարկվելով նրա կարգադրություններին, ենթակասերն ավելի շուտ ձգտում էին նմանվել իրենց ղեկավարին, գիտակցելով, որ դրա համար նախ անհրաժեշտ է նրա նման տիրապետել մասնագիտության ողջ համակարգին, ձեռք բերել աշխատանքային հմտություններ: Այս առումով Ֆրունզե Պետրոսյանը հարյուրավոր քաջարանցիների համար նպատակակետ էր դարձել, բոլորն ուզում էին գնալ նրա ճանապարհով, հասնել նրա փառքին...

Ֆրունզե Պետրոսյանի գործուն մասնակցությունը 2004-ն մեծ ներդրում է ունեցել 1968թ. Քաջարանի երկրաշարժի հետեւանքների վերացման, ձեռնարկության խաթարված գործընթացը վերականգնելու գործում: 1974թ. նա տեղափոխվել է Երեւան, ստանձնել հանրապետության գունավոր մետալուրգիայի վարչության պետի պաշտոնը, որտեղ պաշտոնավարել է տասը տարի: Երբ կոմբինատում բարդ իրավիճակ էր ստեղծվել, երկրի ղեկավարությունը Ֆ. Պետրոսյանին վերադարձրեց Քաջարան, եւ նա վերստին գլխավորեց կարելորագույն ձեռնարկություններից մեկի աշխատանքը: 1994-ին տեղափոխվել է մայրաքաղաք՝ արդյունաբերության նախարարության ներկայացուցիչն էր Ջանգեզուրում, այնուհետեւ առեւտրի եւ արդյունաբերության նախարարի խորհրդակցական էր: Արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի, պարգևատրվել Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշմի շքանշաններով, «Լեռնագործի փառքի» 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի շքանշանների ասպետ էր, եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Այսօրվա շատ ու շատ բարձրակարգ մասնագետների, ոլորտում ճանաչում գտած ղեկավարների համար նա ուսուցիչ էր ու գործընկեր, գործի նվիրյալ եւ ակտիվ քաղաքացի: Նա այժմ կլինի 80 տարեկան...



## ՌՈՍԱՆ ՆՎԱՍՍԱՐՅԱՆ

Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ԿՈՐՄԻՏԵ, 1994-98թթ.

Առաջին հանդիպումս Ֆրունզե Պետրոսյանի հետ կայացել է 1970-ին, երբ ավարտելով Լենինգրադի լեռնային ինստիտուտի էլեկտրամեխանիկական ֆակուլտետը, գործուղվեցի Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատ: Այդ ժամանակ նա ղեկավարում էր ձեռնարկությունը: Գործի մարդ էր, իսկական արդիւստիանալ, արտադրության ղեկավարի տիպար: Կոմբինատի նախնական վերազինման և արտադրական հզորությունների ընդլայնման գործում անուրանալի ավանդ ունի: Եվ եթե ձեռնարկությունն այսօր նման արտադրական կարողություն ունի, պիտի պարտական լինի նրան: Դեռևս խորհրդային տարիներին ամենաձեռնարկությունը սարքավորումը մերկրում էր կոմբինատ: Եվ դա այն բանի շնորհիվ, որ մարդկային փոխհարաբերություններում նա շիտակ ու սկզբունքային էր: Ոչ միայն հանրապետությունում, այլև նախկին Միությունում ճանաչում ունեւր, վայելում էր գունավոր մետալուրգիայի նախարար Լոմակոյի հարգանքը:

Նրա համար առաջնայինը պետության շահն էր, նման դեպք չեն հիշում, երբ որեւէ մեկին հեռախոսազանգով ընդունեք աշխատանքի, այնպես չէր լինում, որ մի տեղից բերեք, կարգեր «նաչալնիկ»: Եթե որեւէ մեկին նշանակում էր որեւէ պաշտոնում, այդ մեկը նախ՝ մասնագիտորեն պիտի համապատասխաներ այդ պաշտոնին, հետո լինեք բարոյական և ազնիվ մարդ: Եթե այսօր կոմբինատում լավագույն ավանդույթները շարունակվում են, նրա կարգային ինքնավար քաղաքակրթության արդյունք է իրենց ձեռնարկությունների հետեւից չէր ընկնում: Պարաբայան շարժման օրերին Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը կանգնեցնելու կոչեր էին հնչում, նա կտրականապես դեմ էր դրան ասելով՝ քաղաքական հարցեր ունեք, գնացեք ձեր հարցերը լուծեք: Այն համոզմունքն ունեւր, որ արդյունաբերական հսկայի աշխատանքային ռիթմը չպիտի ընդհատվի: Պատահել է այնպես, որ միայն ինժեներա-տեխնիկական անձնակազմի ուժերով է կոմբինատն աշխատել:

Խստապահանջ ղեկավար էր, խնցրյալների սիրահար չէր, ուտել-խմելն իր համար տասներորդական հարց էր: 1984-ին, երբ վերստին ստանձնեց կոմբինատի ղեկավարությունը, եւ ձեռնարկության տնօրենի տեղակալ, հետո գլխավոր ինժեներն էի: Շանրաբեռնված էինք աշխա-







## ԱՆՎԱՆԻ ՍՅՈՒՆԵՅԻՆԵՐ



### ԵՂՈՒԹ ՆԱԿԱԶՉՐԶԱՆՈՒՄ

**Ֆրունզե Պետրոսյանը քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ուներ, իր երկրի հուզերով ապրող մրավորական էր: Եղել է ԽՍՀՄ 24-րդ, 27-րդ համագումարների պատգամավոր, մասնակցել է Հայկումուսի 25, 26-րդ համագումարներին, Հայկական ԽՍՀ Պետագույն խորհրդի մի քանի գումարման ղեկավար էր, ՊԽՍՀ Նախագահության անդամ: 1989 թվականի հունիսի 23-ին Հայկական ԽՍՀ փաստաբանական գումարման ղեկավար խորհրդի ներքին նախագահության անդամ էր: 22 փարի առաջ նրա արտասանած ելույթի որոշ դրույթներ այսօր չեն կորցրել իրենց այծմեակնությունը:**

**Պետրոսյան Ֆրունզե Պետրոսյանի Ելույթը**  
**Քաջարանի №292 ընտրական օկրուգ**

Հարգելի՛ ղեկավարներ: Բնության ստեղծած բարիքների և նրա բնականորեն օրենքների մարդու կողմից անխտեն շահագործումն առաջացրել է իր՝ մարդու համար խիստ վտանգավոր կենսոլորտ: Ամենամեծ վտանգն այն է, որ կենսոլորտի ներդաշնակ հավասարակշռության խախտումը շարունակվում է հարցականի տակ դնել մարդու և նրա սերունդների լինելու կամ չլինելու հարցը, օրեցօր որակագրկելով մարդու գենետիկ ֆոնդի հիմքը՝ նրա կենսաբանական կենսունակությունը:

Պետրոսյանը կենսաբանական հավասարակշռությունը խիստ կերպով խախտվել է նաև մեր հանրապետությունում, որի առանձին ճեզիտներում իրավիճակը պահանջում է արտակարգ միջոցներ ձեռնարկել: Մեր բազմաթիվ անխտեն գործունեության շարքից ցանկանում են թվել մի քանիսը, ըստ մեզ, կարևորները:

Տասնամյակներ շարունակ, պատճառաբանելով մեր հանրապետության սակավահողությունը, բռնեցինք գերարագ ուրբանիզացիայի ճանապարհը: Իսկ ինչ կնշանակի սա՛՛ նախ մարդկանց, հետևաբար նաև նրանց գործունեության կենտրոնացումը հանրապետության տարածքի առանձին կետերում, չունենալով դրա համար ո՛չ տարածքային, ո՛չ բնական, ո՛չ սոցիալական

պայմաններ և ո՛չ էլ քաղաքային հատուկ կենցաղային կուլտուրայի ավանդույթներ: Սրա օրինակը մայրաքաղաք Երևանն է, որը լոքո ձկան մնան ավելի մեծ գլուխ ունի, քան մարմին, որի պատճառով տեղումի մեջ է ապրում: Ցավալից այն է, որ այդ օրինակով շարունակվում են մեծանալ մեր շրջակայքում:

Երկրորդ լուրջ սխալը մեր հանրապետությունում արտադրական ուժերի աշխարհագրական տեսակետից անհաշվելի անհամապատասխանությունն է, առանց հաշվի առնելու դրա ներկա և հետագա սոցիալական և էկոլոգիական հետևանքները: Մի քարոզ օրինակ մեր շրջակայքում: ԽՍՀՄ գումարման մետալուրդային միմիստությունը նախատեսում է Ձանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատի նոր ընդարձակումը 13-րդ հնգամյակում: Մեր կարծիքով, դրա իրականացումը կբերի ինչպես Քաջարան քաղաքի, այնպես էլ Ղափանի շրջանի էկոլոգիական հավասարակշռության խիստ խախտման:

Կոլեկտիվի կարծիքն այս հարցում անտեսվեց միմիստության կողմից, իսկ հանրապետության կառավարությունն անպատասխան է թողել այս խնդրի օբյեկտիվ լուծմանը միջամտելու մեր գրավոր խնդրանքը, կարծես դա իրեն չի վերաբերում:

Հանրապետության կառավարությունը, սկսած 70-ական թվականներից, մշակելով հանրապետության արդյունաբերության տեխնիկական առաջընթացն ապահովող ճյուղերի առաջնահերթ գաղափարներն է, մեր հանրապետությունում իրեն ավանդույթներ ունեցող գումարավոր մետալուրգիան որպես էկոլոգիապես վտանգավոր ճյուղ հետին պլան մղեց: Այդ վերաբերմունքը շարունակվում է նաև այսօր: Ըստ մեզ, այդ «վնասակար» ճյուղը պետք է օգտակար դարձնել ոչ թե գումարավոր մետալուրգիայի ձեռնարկությունների գարգացումն ինքնահոսի թողնելով մինչև անփութափելի փակելու դաստի առաջ կանգնելը, ինչպես նաև կատարվեց Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի հետ, այլ ժամանակին հոգատար վերաբերմունք է պետականորեն խիստ պահանջկոտություն ցուցաբերել լեռնահանքային ձեռնարկությունների տեխնիկական առաջընթացի, առաջին հերթին շրջակա միջավայրի համար անվտանգ տեխնոլոգիաների

ներդրման հարցերում:

Պետք է հաշվի առնել, որ մեզ, դժբախտաբար, խիստ լեռնոտ երկիր է բաժին ընկել և, բարեբախտաբար, հարուստ լեռներ, լավ է, թե վատ՝ դա է մեր և մեր սերունդների սեփական ունեցվածքը, մնում է, որ մենք խելացի վարվենք այդ հարստության հետ և օգտագործենք ի բարօրություն մեր ժողովրդի: Ուստի տափաստաններում ցորենի արտի հողերի դեպքում նրա մեջ գտնվող չի հասցնում մինչև ճանապարհից հասնել: Մենք լեռներ ունենք, մշակելով դրանք պետք է խելահաս լինենք և չկեղտոտենք օդն ու ջուրը, չփչացենք դրանց լանդշեյփը կառուցած օրավար հողակտորները, չհրկիզենք մեր ցորենի արտը: Չպետք է մոռանալ, որ քանդելն ավելի հեշտ է, քան՝ կառուցելը: Եթե այսօր հանրապետությունում համաժողովրդական պայքար է ծավալվել քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները փակելու համար, մենք դա հասկանում ենք և ընդունում, քանի որ դրանք մեր մարմնի վրա պատվաստված մեթոլոգ տրեյդերն մասեր են, որոնք սնվում են դրսից, իսկ լեռնահանքային արդյունաբերությունը մեր տնտեսական պոտենցիալ հնարավորության կրկնապատկող վերջինը չէ և տարբեր քաղաքների ու վայրերի հազարավոր մարդկանց է կերակրում:

Իմ ընդհանրախոսներն իրավասու են ինձ հարցնելու, իսկ ո՞րն է ստեղծված իրավիճակի մտքում ևս վրավոր մետալուրգիայի աշխատողների մեղքը, և ինչ ենք անում այն շտկելու համար: Մեր ձեռնարկությունում այսօր շրջակա միջավայրի արտոտման հիմնական պատճառն ավելի քան 30 կիլոմետր երկարություն ունեցող պոչատարի մի մասի մետաղյա խողովակաշարի արագ մաշվելն է, որի նորոգման կամ փոխելու ժամանակ նրա պարունակությունը դատարկվում է բնական ջրատարներն ու կեղտոտում Ողջի գետը: Հանրապետության բնության պահպանության կոմիտեի ակտիվ օգնությամբ, անցած տարի հնարավորություն ստացանք սկսելու պահեստային գույքից, 11 միլիոն ռուբլու արժեքով խողովակաշարի շինարարությունը, որը ներսից պատած է քարե ձուլվածքով: Այդ նոր գծի կեսը շահագործման կհանձնվի ընթացիկ տարում, մեկ քառորդը՝ մյուս տարի, վերջին քառորդը՝ 1991 թվականին: Ծինարարության ավարտից հետո կբացառվի Ողջի գետի

աղտոտումը, որն այժմ տեղի է ունենում տարին 2-3 անգամ:

Լեռնահանքային արդյունաբերության մյուս վնասակար հետևանքն այն է, որ տարեկան միլիոնավոր տոննաների հասնող թափոններ են պահեստավորվում, օգտագործումից հանելով տասնյակ հեկտար գյուղատնտեսության համար պիտանի և ոչ պիտանի հողային տարածքներ, միեւնույն ժամանակ հանդիսանալով փոշու առաջացման ակտիվ աղբյուր:

Վերջին մի քանի տարիների ընթացքում ակտիվ աշխատանքներ ենք տանում այդ տարածքների ռեկուլտիվացիայի և դրանք գյուղատնտեսական օգտագործման տակ դնելու համար: Վերականգնվել և բազմամյա խոտի տակ է դրվել ավելի քան 50 հեկտար տարածք, և այն ավելանում է տարեկան 5-7 հեկտարով:

Անտառակույս, բոլորը գիտեն, որ որոշակի էկոլոգիական վնաս է հասցնում նաև շինարարական ինտեր ցյուբերի՝ խճի ու ավազի արդյունահանումը: Կոմբինատի թափուկատարում վերջացվում է տարեկան 250 հազար խորանարդ մետր կվարցային ավազի արտադրության շինարարությունը: Քաջարանի բաց հանքում սկսվել է թափուկավայր տարվող ապարներից խճի արտադրությունը: Ծինամյութերի այս տեսակների արտադրությունը, որոնք մասամբ բերվում են Արարատյան դաշտի հանքերից, այժմ լրիվ չափով կարող են ապահովել Ձանգեգուրի ռեզիդի շինարարական կարիքները, իսկ ավազի արտադրության կառավարի հանրապետության մյուս շրջանները: Ղափանի լեռնահանրատում կոմբինատում ձեռնամուխ են եղել թափոններից հանքային ներկեր ստանալուն, որը մի կողմից նյութական և տնտեսական օգուտ կբերի հանրապետությանը, մյուս կողմից կբերի քաղաքացիներից թափոններով աղտոտելու պոտենցիալ հնարավորությունը: Նախօրոք ասեն, որ ներկերի ստացման տեխնոլոգիան բացառում է քիմիական պրոցեսները և էկոլոգիապես անվտանգ է: Աշխատանքներ են տարվում Ղափան քաղաքում տրոլեյբուսային տրանսպորտի ներդրման և կենտրոնացած ջերմակենտրոնի կառուցման ուղղությամբ:

Ընկերներ: Խոսելով շրջակա միջավայրին հասցվող վնասների և դրանք վերացնելու մասին, չի կարելի չխոսել արտադրության մեջ կիրառվող տեխնոլոգիաների և այդ նպատակով օգտագործվող սարքավորումների այսօրվա ցածր մակարդակի մասին:

Դժբախտաբար, տասնամյակներ շարունակ նոր արտադրություն կազմակերպելիս կապիտալ միջոցների մի չնչին մասն էր հատկացվում բնապահպան կառույցներին և սարքավորումներին: Նման վերաբերմունքը ոչ միայն բերեց նրան, որ այսօր բոլոր հին արտադրությունները չեն ապահովում ժամանակակից էկոլոգիական պահանջները, այլ, որ ամենակարևորն է, չի գարգացել այդ բնագավառի գիտությունն ու տեխնոլոգիան: Երբ այսօր բնության պահպանության համար տնտեսական և ֆինանսական սահմանափակումներ համարյա թե չկան, մենք չունենք համապատասխան ուսումնասիրություններ, տեխնոլոգիա, մեքենաներ, չափող և հսկող սարքավորումներ: Մենք կարծում ենք՝ հույժ կարելու է, որ բնության պահպանության կոմիտեին ունենա իր գիտահետազոտական, գույք և նախագծային ինստիտուտները: Որպեսզի ֆինանսների միմիստությունն ինձ չառարկի, կարող են մասնագետները, թե ինչի հաշվին: Հանրապետությունում այսօր գործող բազմաթիվ ճյուղային գիտահետազոտական ինստիտուտներն այս կամ այն չափով զբաղ-

վում են էկոլոգիայի հարցերով և, պետք է ասել, անբավարար: Նպատակահարմար են գտնում այս բոլոր խմբերը ի մի հավաքել և ստեղծել միասնական գործող էկոլոգիայի գիտահետազոտական-նախագծային ինստիտուտ:

Ընկեր ղեկավարներ: Իմ պարտքն են համարում խոսել բացախոսության և դեմոկրատիայի գարգացման պայմաններում հանրապետությունում կառավարման վերջին մեկուկես տարվա իրականացվող հարաբերությունների մեջ տեղ գտած թերությունների մասին, որոնք առնչվում են ինչպես քաղաքական, սոցիալական, այնպես էլ էկոլոգիական հարցերի լուծմանը:

Ինչպես հայտնի է, բացախոսության գործնական թույլտվությունը և դանդաղ, բայց գարգացող, դեմոկրատիան հնարավորություն տվեցին արտաքին չեքեզացի առանձին սակավաթիվ համախոհների ոչ ֆորմալ խմբերին համախոհելու և իրենց, որպես անհատների, դիրքորոշումը, պահանջները, ինչպես նաև հույզերը հրապարակ դուրս բերել ու ստեղծել բառիս բուն իմաստով ժողովրդական ոչ ֆորմալ կազմակերպություն: Կառավարման գիտական պրոցեսում սա անմիջապես անհրաժեշտություն է, որովհետև ֆորմալ կառավարությունը, տվյալ դեպքում կազմակերպությունը, միայն պաշտոնական ճանապարհներով չի կարող ոչ միայն կատարել գործեր, այլև իրագործել իր ֆունկցիան առանց ժողովրդի հետ ոչ ֆորմալ կապերի:

Նպատակամուկ խնդիրները լուծվում են միայն այն ժամանակ, երբ կառավարությունը և ժողովուրդը վստահում են միմյանց: Եվ մնան պայմաններում իրական կայուն բացակայությունը բերեց ժողովրդի անվստահությանը և նույնիսկ անհատական ատելության, որի պատճառով, գաղտնիք չէ, մեծ դժվարություններ ստեղծեցին, և վնասներ կրեց մեր հանրապետությունը՝ տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և մշակութային բնագավառներում:

Իսկ չէ որ ոչ ֆորմալ կազմակերպությունները ստեղծագործական մեծ պոտենցիալ էին և հարյուրավոր հարյուր էին բարձրագույն, պատրաստակամություն հայտնում լծվելու դրանց իրականացմանը, լինելու դա ազգային, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, թե մեր կացության մյուս հարցերը:

Սակայն հայտնի է, որ ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպությունների միջև անվստահության ընթացքում առաջ եկան նաև էնոցիոնալ ջերմության ծնված խեղաճանց և վնասակար կոչեր ու պահանջներ: Նման հայտարարություններ լինում են նաև էկոլոգիական հարցերի վերաբերյալ: Այս բոլորը բնական է, որովհետև հասարակության ինքնագործունեությունը մնալ է բնակեցված մեծ շենքի բնակիչների հարաբերությանը, որը պետք է ապահովված լինի կոյուղիով: Կառավարության կարևորագույն ֆունկցիաներից մեկը սանիտարի դեր կատարելն է: Նա պետք է մշտական կապ ունենա ոչ ֆորմալ մեծ ու փոքր կազմակերպությունների հետ, համապատասխան օբյեկտիվ ինֆորմացիա տա և վերջապես համատեղ գործի և կարողանա ոչ օգտակար, իսկ առանձին դեպքերում էլ վտանգավոր ճանապարհից իր ժողովրդին հեռու պահել:


Ուրախալի է, որ վերջին ժամանակներս մեր հանրապետության էկոլոգիական կառավարությունը ակտիվ և ազնիվ աշխատանք է տանում շտկելու թույլ տված սխալը:

Կարծում են, մերձեցման սկսված պրոցեսը կգարգանա և շուտով ժողովրդի կողմից հաճախ օգտագործվող «միասնություն» բառը կիմաստավորվի գործով:

ԱՆՎԱՆԻ ՍՅՈՒՆԵՑԻՆԵՐ

Ես եղել եմ Քաջարանում

Հատված Սերո Խանզադյանի «Հայրենապատում» ստեղծագործությունից, գիրք Ա, էջ 46-52



1957, հունիս: – Մի լավ գիշեր Կապուտջիղի հովիվների մոտ մնալուց հետո, ձիով իջա լեռներից ու պատահած ավտոն նստելով, լեռնա-յին անհամար ոլորաններ անցնելուց հետո, հասա մեծ ճանապարհին: Չիմ ետ տվի: Քաջարան եմ գնում Սամվել Մատինյանի տասը տոննա բեռ տա-նող «ՅԱՁ» մեքենայով: Նստել եմ խցիկում, որ լայն է, իմ աշխատասե-նյակի չափ: Ահռելի մեքենան հեա-լով ելնում է դիրքը:

– Սամվել, քանի՞ երեխա ունես:  
– Հինգ: Քաջարանում եմ ծնվել, իսկ ես Գիլիջանից եմ:  
– Կարողանո՞ւմ ես երեխեքդ պահել:

– Նա ծնողներն է:  
– Անցյալ ամսվա աշխատա-վարծա ու՞ք հազար ռուբլի էր:  
Սամվելը պատմում է, որ հիմա Քաջարանում 14.500 բնակիչ կա: Պատմում է նրանց օր ու կյանքի մա-սին: Երբ ես ասում եմ, թե 155 տարի առաջ այս «մահալում» ընդամենը ութսուն ծուխ էր, եթե ծուխը տասը շունչ էլ հաշվես, ու՞ք հարյուր կլինեք, Սամվելը զարմանում է: Փակագծում ասեմ, որ այս հինգ գյուղը միասին 1831 թվին ունեցել են ընդամենը 312 բնակիչ:

Լայն խճուղին ոլորվում է Ողջի գետի եզերքով: Գետը երբեմն ծառս է լինում հենց մեր քթի տակ ու ջրի ցայտեր թափում ավտոյի փեշերին: Այստեղ 1724 թվականին թուրք նվա-ճողների դեմ մի քանի խոշոր հաղ-թանակ է տարել Դավիթ Բեկը: Սրբա-զան վայրեր:

Ահա եւ Քաջարանը: Արեւից շո-ղում են Կապուտջիղ լեռան հավեր-ժական ծյուները: Նրանցից բխող գետակները շառաչելով գալարվում են դեպի ձորը: Ես կլանված նայում եմ հրաշքին: Տարիներ առաջ, հենց որ արեւը մայր էր մտնում, մթնում, խավարում էր այս ձորը: Ներքեւի անտառից դուրս էր գալիս արջը եւ, իբրեւ տեր ու տնօրեն, ման գալիս Ողջի գյուղի ծուռունուս փողոցնե-րում: Ապա տերեւաթափից մինչեւ ծորուն թուփը հասնելը միակ կածա-նը փակվում էր, եւ ողջեցին ու քա-ջարանցին ու՞ք ամիս կտրված էին մնում աշխարհից:

Գուցե երազի մեջ եմ, գուցե հե-քիաթ է: Թարթում եմ աչքերս: Ահա իմ առաջ փռվել է Հայաստանի ամե-նաբարձր ու ամենաերիտասարդ քաղաքը՝ Քաջարանը:

Այստեղ լեռները զարմանա-լի խոտուն անուն ունեն: Մեծը Կա-պուտջիղն է: Կապույտ ջիղ: Եվ կապույտ-կապո՛ւյտ է՝ վրան սա-ճի հավերժական շերտեր: Սրա մի ճյուղը Կապանումն է: Այստեղով է անցնում Նախիջևանից Կապան (Ղափան) բերող միակ ճանապար-

ից՝ բարձր լեռնանցք-դուռը: Ուրեմն՝ Կապանի դուռ: Այստեղ կա Դարպաս լեռ ու ձոր: Դեպի Սիսական տանող ճանապարհի մի լեռնանցքը կոչվում է Դռնապան: Ավելի դեմը Միջնական է, դարձյալ լեռնանցք:  
Հանքերի վարչության պետ Ֆրունզիկ Պետրոսյանը երեք տա-րի առաջ է ավարտել Երեւանի պո-լիտեխնիկական ինստիտուտը: Նա ծնվել է այստեղ՝ Քաջարանում, երբ ճանապարհի չի եղել այստեղ, եւ հայ-րը՝ Հմայակը, այս լանջերը արո-րով մի կերպ բերել, կորել է ցանել: Ֆրունզիկն ինձ ծանոթացնում է լեռ-նագործների հետ: Սա Մասուրյան Ներսեսն է՝ հանքաքար հանող բան-վոր: Ձախել է, բայց արդեն յոթ երե-խա ունի:

Ողջու կիրճով ո՛չ Պոմպեոսի բա-նակն է կարողացել անցնել, ո՛չ էլ Շապուհ արքայինը: Նրանք հասել են Ողջու կիրճի բերանին, բայց մնա-ցել են ներքեւում՝ Բաղաբերդի տակ: Հռոմեական լեգեոներին ջար-դել են: Շապուհը երեք տարի բերդն ապարդյուն պաշարելուց հետո, քի-թը կախ վերադարձել է իր Տիգրանը: Ողջու կիրճով Քաջարան է հասել միայն հանքագործների այս բանա-կը, այն էլ քառասունվեց թվականին: Այդ բանակի լեռնագործները հա-վաքովել են Կապանից, Կավարտից, Կատարի հանքերից: Եկել են Ալա-վերդուց, Ուրալից, Դոնբասից: Եկել են ոչ թե հափշտակելու, այլ՝ ստեղ-ծելու: Եվ ստեղծել են:

Գնում եմ Գանձասար: Նոր «Վու-զան» փափուկ ասիում է լեռն է վեր ոլորված լայն ճանապարհով: Վա-րորդ Հովակիմը հայրենադարձ է, եկել է Նոր-Ջուղայից:  
– Որ եկա Քաջարան, շինարարու-թյունը դեռ նոր էր սկսվել:  
Կուսկոմիտեի քարտուղար Ռա-ֆիկ Մինասյանն էլ է նոր եկել Քա-ջարան: Տասնվեց տարեկանից հո-րատող է եղել Կավարտում եւ հիմա երեսուն տարեկան է, երեք զավակ ունի...

Լեռնագործ մարդիկ պարզ են, անմիջական, ազնիվ, տաքարյուն, բարեսիրտ: Եվ այս ի՞նչ աստվա-ծային սեր ունեն դեպի իրենց գոր-ծը, երկնամերձ բարձրություն վրա գտնվող իրենց քաղաքը, դեպի իրենց հյուրը: Այս մեկն էլ էքսկավա-տոր բանեցնող Սերոյածա Հարություն-յանն է՝ լեռան արծիվ, թուխ երեսին պրոմթեթայան հանդարտություն: Երբ Քաջարան է եկել, հազիմ մի շա-պիկ է ունեցել: Հիմա առանձնատուն ունի, կին, երկու զավակ:

Ամպերի միջով կախվել է ճոպա-նուղին: Վազոմիկները, օդից կախ-ված արծիվների սնան, Գանձասարի գանձը՝ հանքաքարը, տեղափոխում են հարստացուցիչ ֆաբրիկա: Այս գանձերի համար էին այստեղ ուզում գալ Պոմպեոսը, ապա նրանից չորս հարյուր տարի հետո՝ Շապուհը:

Չորում գազագել է Ողջի գե-տը: Ռաֆիկ Մինասյանն ասում է, թե անցյալ շաբաթ սոսկալի հեղեղ է եղել, յոթանասուն տոննանոց քա-րեր է բերել: Երեւի Տորք-Անզեղ հին աստվածն է նստած Կապուտջիղի գլխին, որ նման քարեր է նետում քա-ղաքի վրա: Քաջարանցիները մարդ-կային կորուստ չեն ունեցել բարե-բախտաբար:

Պետրոս Չոփուրյանն իր երեք եղբայրների հետ Քաջարան է եկել Սիրիայից, տասը տարի առաջ: Ու-զում եմ Չոփուրյաններին տես-նեմ, բայց եղբայրները գնացել են Երեւան: Ի՞նչ գործով:

– Գնացել են իրենց փոքր եղբորն ամուսնացնելու: Երեւանից են հարս բերում:

– Իսկ հարսը կա՞ Քաջարան: Երեւանից է, այլ...

– Դեռ Մոսկվայից էլ կգան, Չե-խոսլովակիայից էլ: Սրան Քաջարան կասեն, հա՛...

Շուտով այստեղ լեռնագործնե-րը կկատարեն Չոփուրյան կրտսերի հարսանյաց հանդեսը: Քաջարանում մի նոր, մատաղ ընտանիք էլ կավե-լանա: Եվ նրանց զավակները մի վաթսուն-յոթանասուն տարի հետո իրենց թոռներին կասեն.

– Ես քաղաքը մեր հայրն է հիմնա-դրել:

Սա էլ Թեւան դային է: Խե՛ղճ Թեւան դայի: Կապուտջիղից եկած հեղեղը երկու տարի առաջ քշել-տա-րել է նրա խրճիթը, կնոջն ու զավակ-ներին: Մոնչացել է Թեւան դային, կուրծքը պատռել, մահ ուզել չար Կապուտջիղից՝ իր համար էլ: Բայց Քաջարանը սփոփել է նրան, գուր-գուրել: Քաջարանը բարի աստված է: Մի տարի հետո Թեւան դայուն պակել են: Հիմա Թեւան դային զա-վակի է սպասում:

Քաջարանում այսօր յոթ միջնա-կարգ եւ մեկ ութամյա դպրոց կա: Դրանցից մեկուն հանդիպում եմ ու-սուցչուհի Քնարիկին: Այն աղջիկն է, որ վաղուց-վաղուց ջուրն անցնելիս - խնդրում էր ինձ, որ բռնեմ իր ձեռքը: Չէի բռնում:

1965, նոյեմբեր: – Քաջարանում բոլորը պաշտում են իրենց կոմբի-նատի դիրեկտոր, կավարտեցի հին լեռնագործ Հմայակ Սահակյանին: Նա էլ հարգանքով է հիշում իրե-նից առաջ այստեղ դիրեկտոր եղած մարդկանց:

– Նրանց ձեռքով է ստեղծվել Քա-ջարանը:

Այստեղ մի լեռ կա՝ Նապատ-Նո-յաստապան: Առնչվում է Նոյի առա-պելի հետ: Նա էլ այս լեռնաշխարհի հետ մարդամեջ է մտել, այն էլ հա-մաշխարհային մասշտաբով: Գիտ-նական երկրաբանները միաբերան ու սիրով ասում են. – Չանգեզուրի լեռնաշղթան դրախտ է երկրաբանի համար:

1967, սեպտեմբեր: – Ինձ թվում է պակասել են Կապուտջիղի մշտնջե-նական սառույցները: – Այստեղ ըն-դամենը հարյուր օր է, որ սառնամա-նիք չի լինում:


– Մեր Քաջարանի տաք շնչիցն է: – Սա ասում է բնիկ քաջարանցի Ֆրունզիկը, բնիկ քաջարանցի Հմա-յակի որդին, բնիկ քաջարանցի Պե-տրոսի թոռը: Ֆրունզիկ Պետրոսյանը հիմա Քաջարանի պղինձմոլիթե-նային կոմբինատի դիրեկտորն է: Հարցնում եմ հիշո՞ւմ է այն ուղտերը, որոնց վրա քառասունվեց թվակա-նին մի էլեկտրական ազդեցատ բե-րին այստեղ: Չի հիշում, փոքր է եղել:

Այս նեղ ձորում 1868 թվականին հինգ գյուղ է եղել, ու միասին ունեցել են հինգ արոր, վաթսունմեկ այծ ու ոչ մի ապակե լամպ: Հիմա իմ առջեւ Քաջարան քաղաքն է՝ 15.066 բնակչ-յով: Մեր հայոց լեռների գանձը, մո-լիթեթեային զբաղեն է ու ամրությունը:

1969, մարտ: – Մեր Ֆրունզիկի բարեկամի տղան ու՞ք տարեկան է: Նա Ֆրունզիկին խնդրում է, որ իրեն մի օր Երեւանից տանի Քաջարան: Ես տղային ասացի, թե եղել եմ Քա-ջարանում: Նա էլ հպարտ ասաց.

– Մամաս քաջարանցի է:

Ես աչքերս փակում եմ, եւ մտքիս առաջ պատկերվում է մի քարեղեն արահետ, որ ելնում է դեպի... դեպի



Փայտափորագրությունը Ֆրունզե Պետրոսյանի Նախափորություններից մեկն էր:

երկինք: Դե, ուրեմն, ծանոթացիր վե-րեւ գրածներին, փոքրիկս:

Կավարտցի պատանի հան-քագործ Ռաֆիկ Մինասյանը հիմա շրջանի կուսակցական ղեկավարն է՝ կուսաշրջկոմի առաջին քարտուղարը: Հենց որ երեւում եմ Ղափանում, ու-րախանում է:

– Գիտեմ, որ առանց Քաջարա-նը տեսնելու տեղ չես գնա: Ուրեմն, գնացի՞նք:

Հետո մեքենայի մեջ խոսում ենք իմ «Քաջարան» վեպի մասին, որի մի կերպարն ինքն է: Ես հարցնում եմ հարստացուցիչ ֆաբրիկայի թափո-նաջրի մասին, որ աղտոտում է գետը:

– Նախագիծն ստացել ենք՝ քա-ռասունհինգ միլիոնի արժեքով: Այս տարի սկսում ենք թունելներ ստեղ-ծել, որ թափոնաջուրը հեռացնենք անայի վայր: Այնտեղ թափոնամբար ենք կառուցում: Մի չորս-հինգ տարի հետո մեր Ողջի գետի ջուրը կստանա նախկին տեսքն ու համը:

Նաեւ հին գրույցներ ենք հիշում: Քաջարանցի մի գեղջուկ գնում է Վե-րին Հանդ գյուղը՝ հարսանիքի: Ու-զում է պարել, նվագողներին ասում է.

– Լավ աժեցեք, մին փութ կիռնա-նի եմ շաբաշ տալու:

Հենց որ սկսում է պարել, շալ-վարն ընկնում է: Գոտի չի ունեցել խեղճը: Գոտու տեղ չոր խոտից հյու-սած կեն է կապել:

Անման փլավ ենք ուտում աղրբեջանից հորատող Իմարանի տանը: Իմարանն էլ է Քաջարանի նոր բնակիչ: Դեռեւս 1892 թվականին, երբ խոսք կար օգտագործել Քա-ջարանի մետաղները, հայերի հետ շատ աղրբեջանցիներ ու հույներ էլ

են գալիս այստեղ ապրելու: Հեթա-նոսական շրջանում օգտագործվող պղնձի ելքերն այստեղ հայտնաբե-րել է գերմանացի գիտնական Հեր-ման Վիլիելմ Աբիխը (1806-1866) 1835 թվին: Պետերբուրգում օրդի-նար ակադեմիկոս էր, նա որ հետա-զոտել է Վեգուվը: 1844-ին եկել է Հայաստան՝ Ակոռիի երկրաշարժի պատճառներն ուսումնասիրելու: Անիում գծագրեր է արել: 1845 թվին, Խաչատուր Աբովյանի ուղեկցու-թյամբ, բարձրացել է Արարատ լեռան գագաթը: Համարվում է «Կովկասի երկրաբանության հայրը»:

Քաջարանի մոլիթեթեան ու գունա-վոր այլ մետաղներ հայտնաբերվել են սովետական օրերին: Մեր Քա-ջարանը 1966-ին պարզեատրվեց Լեւինի շքանշանով: Մինասյանն ասում է:

– Այդ շատ է մեծակշիռ մեր քա-ղաքի էությունը: Պատկերացրու, այս տարի մեր արտադրանքը կազմում է մի քանի տասնյակ միլիոն ռուբլի:

– Որքա՞ն մարդ է աշխատում միայն հանքագործությունում:

– Մի քանի հազար մարդ,– իսկույն ասում է Մինասյանը, որ այս լեռնե-րի կենդանի հանրագիտարանն է: – Պղնձի խտանյութն ուղարկում ենք Ալավերդի՝ այնտեղ ծուլելու: Մոլիթ-դեմն այլ վայրեր ենք առաքում:

Մենք քայլում ենք Լեւինի ան-վան պողոտայով, որ շատ գեղեցիկ է եւ երեք կիլոմետր երկարություն ունի: Գետի վրա երեք սղանչելի կա-մուրջ է կառուցվել, հզոր պատմեշ-ներ ունի գետը: Մենք հիանում ենք քաղաքով, հատկապես նրա «Հան-քագործ» հուշարձանով, որ հինգ մետր բարձրություն ունի: ■









Հինավուրց Ձորք գավառի բարձրադիր գոտու գյուղ է, Աժդահանական-Կապուտջուղի արեւելակողմ ստորոտին՝ մեղմաթեք անդակների ու արոտավայրերի շուրջապարի մեջ: Գյուղը գտնվում է հյուսիսային լայնության 39° 09' 04", արեւելյան երկայնության 46° 09' 36"-ի, ծովի մակարդակից 1950մ բարձրության վրա: Վաղ միջնադարից գավառում հիշատակվել են Բագախու վանքն ու Բակավանքը. ցայժմ գյուղի խոսվածքն ունի «Վանքին սեռ» հանդամասը, որը, ըստ գտածո իրերի, հնավայր է կարծվում: Տաթևի վանքին հարկատու գյուղերի տասներորդարյան ցուցակում կոչված է Քչանանց՝ Բաղաբերդի գավառակում (հարկի չափը՝ 2250 բեռ): Քաջարանց նորանունը հավանաբար գործածել են դավիթբեկյանները, սակայն սկսել է շրջանառվել ռուսատիրության ժամանակներից՝ զուգահեռելով ուշմիջնադարյան Քչանանց տարբերակին. համեմայն դեպս՝ առաջին հիշատակումը գտնում ենք Տաթևի վանքի «Վկայագիր Ուռպելեանց» համախոսականում, որը ստորագրել է նաեւ Բաղալ քյոխվա Քաջարանցին, 1835թ.:

Տարիանման, արտագաղթի ու ներգաղթի վերաբերյալ կան մի շարք ավանդազրույցներ, որոնք առնչվում են անդրկապուտջուղյան Գողթն (Կոխտան) գավառին: Ի դեպ, գյուղն իջեւանատել է եղել Բաղք-Գողթն հնամենի բանուկ ճանապարհին, որը հին սյունեցիները նաեւ կոչում էին Աղի ճանապարհ՝ Նախիջեւանից կերակրի աղ ներկրելու դարավոր ավանդույթով: Ըստ մի ավանդազրույցի, դիցական լեռան մի խորխորատում երբեւէ հանքային ձեթ (նա՛վթ) է նշմարվել, եւ վայրը սկսել են ցայժմ կոչել Ձիթածոր կամ Յուղածոր: Գյուղի հանդամասերում կան 33 Կարմիր գրքում գրանցված հազվադեպ բուսատեսակներ եւ մանր կենդանատեսակներ:

17-րդ դարում գյուղում վաղմիջնադարյան փոքրավուն եկեղեցու տեղում կառուցվել է միանավ թաղակապ եկեղեցի Դակուլք Տեառնեղբոր անվամբ, որը կանգուն է եւ վերանորոգվում է 2014 հոգածությամբ:

Քաջարանց գյուղը 1831 թ. ուներ 50 բնակիչ, 1873թ.՝ 228, 1886թ.՝ 465, 1897թ.՝ 394, 1908թ.՝ 504, 1914թ.՝ 157, 1919թ.՝ 800, 1922թ.՝ 401, 1926թ.՝ 431, 1931թ.՝ 526, 1939թ.՝ 548:

Քաջարանց գյուղը բնակավայր է եղել անհիշելի ժամանակներից. գտածո իրերը ժամանակագրում են ուշբրոնզեդարը: ...1823թ. Կասախական մարզի կառավարիչ գեներալ Վ.Մադաթովը գեներալ Երմոլովին գրել է, որ, ըստ տեղացիներից ստացած տեղեկությունների, գյուղի մոտ կան պղնձի ու երկաթի հարուստ պաշարներ: 1835թ. պղնձի հանքերն այստեղ ուսումնասիրել է գերմանացի գիտնական Դերման Աբիխը: Գյուղի արեւելակողմում գտնվող Փիրդավրանի մետաղածուլարանն աշխատել է 1846 թվականից: Դանքերը շահագործել են Ռոզով եղբայրները, Կունդուրովները (ավագը կոչվում էր ուստա Ալավերդի, ազգությամբ հույն էր) եւ այլ գործատերեր: Մոլիբդենային հանքանյութի հայտնաբերումը մեծ հեռանկար բացեց: Դետախուզական աշխատանքները սկսեցին 1930-ական թվականներին: 1933թ. Մոսկվայից հատուկ մասնագիտական հանձնաժողով այցելեց Քաջարանց: Դետախուզական տարիներին մասնագետների կազմն աստիճանաբար համալրվեց տեղացիներով, որոնք եւ կազմեցին հանրապետության տեխնիկական մտավորականության ոսկե բազումը: Կուսակցական-պետական գործիչ Ա.Միկոյանի առաջարկությամբ Փիրդավրանի պղնձածուլական կոմբինատը վերանվանվեց Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատ,



### Քաջարանց

Ֆրունզե Պետրոսյանի հայրական տունը Քաջարան գյուղում

այժմ՝ ՉՄՊԿ: 1931թ. գյուղում կազմակերպվել է Բուդյոննու անվան կոլտնտեսությունը, որն իր տնտեսական ցուցանիշներով Ղափանի շրջանում առաջիններից էր: 1955-ին միավորվել է Կաթնառատի կոլտնտեսության հետ, 1961-ին՝ Լեռնածորի պետտնտեսության: 1947թ. գյուղը դասվել է ԴԽՍՀ քաղաքատիպ ավանների շարքը: Մինչեւ 1951թ. կոչվել է Քաջարանց,

այնուհետեւ՝ Քաջարան: Գյուղի համայնքը 1992թ. համանուն քաղաքից առանձնացվել է եւ դեկավարվում է Քաջարանի գյուղապետարանով: Գյուղն անվանատու եղավ արեւելակողմից հարեւանող Քաջարան քաղաքին, որն այժմ 33 լեռնահանքային արդյունաբերության բարեկեցիկ ուստան է: Գյուղի մերձակայքում կան երկաթային հանքադրույրներ:

Քաջարանին իրենց ստեղծագործություններում անդրադարձել են Րաֆֆին, Ե.Լալայանը, Մ.Շահինյանը, Ա.Խանգաղյանը, («Քաջարան» վեպ), Գ.Արեւյանը, Ա.Կարապետյանը եւ ուրիշներ: Գյուղին նվիրված գրքույկներ են հրատարակել Վ.Ոսկանյանը, Ա.Մաթեոսյանը, Գ.Պապյանը: Միջնադարում Ձորքի տարածքում էր Սյունիքի թագավորության Դին Կապան մայրաքա-

ղաքը, որի ավերակները ցանուցի գտնվում են Վահանավանքի ու Գեղվա գետաբերանի միջակա տարածքներում՝ Ողջի գետի երկկողմ բարձունքներին: Ս.Խանգաղյանի «Հայրենապատում» շարքի 1-ին հատորում կարդում ենք. «Ողջու կիրճով ոչ Պոմպեոսի բանակն է կարողացել անցնել, ոչ էլ՝ Շապուհ արքայինը»: **ՈՐԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ԷԶՆԱՆՆՅԻ)**